



ՄԱՐԻԵՏԱ. ՇԱՀԻՆՅԱՆ

Ս Ր Տ Ի Զ Ա Յ Ն

Մարսափելի մի տարեթիվ կա մարդկության պատմության մեջ... Ոչ միայն մեր՝ հայ ժողովրդի զավակների, այլև ամեն մի կենդանի մարդու մեջ, ով խիզճ ունի, հրեշտային բնաջնջումը միանգամայն անմեղ հայերի վիթխարի զանգվածի,— որի մեջ կային կանայք, երեխաներ, ծերունիներ, մտավորականության ծաղիկը, արվեստի ու մտքի մարդիկ, — չի կարող սոսկում ու սարսափ շառաջացնել, չի կարող սիրտը չսեղմել ծանր ցավ ու մորմոքով:

Իսկ մեզ՝ հայերիս, վշտի այդ հավերժական օրը ստիպում է ավելի սուր ու խորունկ զգալ սերը հայրենի ժողովրդի նկատմամբ, արյունակցական ու հոգեկան կապը նրա հետ:

Թայց այդ օրը միայն սուգի օր չէ: Նշելով մեր ժողովրդի հարատէ ողբերգական բախտի այդ ճակատագրական տարեթիվը, մենք ի սփյուռք աշխարհի ցրված հայերին հիշեցնում ենք, թե այժմ նրանք հայրենիք ունեն, և այդ հայրենիքը ծաղկում ու բարգավաճում է, խաղաղ արեգակն ու պայծառ աստղերը

լուսավորում են նրա անդորր օրերն ու գիշերները, նոր Հայաստանի երեխաները սովորում են, պիտանի քաղաքացիներ դառնում, նրա տաղանդները բոլոր ասպարեզներում բազմանում են, նրա քաղաքներն ու գյուղերը լի են երջանիկ երիտասարդությամբ, որի առջև լայնորեն բացված են աշատ գործունեության ուղիները աշխատանքի ու ստեղծագործության բոլոր բնագավառներում, բացի միայն մեկ բնագավառից՝ մարդու ձեռքով մարդուն շահագործելուց:

Այդ նոր հայրենիքն են կանչում հայերին մեր գիտությունն ու արվեստը, մեր նոր երգերը, մեր «Կոռունկ»-ը՝ երգված ժամանակակից սովետահայ բանաստեղծության կողմանից:

Եվ դեպի նոր հայրենիքն է կանչում հայերին նաև հիշատակը զարհուրելի այդ տարեթվի, որ մենք այսօր նշում ենք, սգալով զոհվածներին:

8 հունվարի 1965 թ.

Յալթա

